Նաիրա Հաջիկյան
Հայաստանի պատմության թանգարան
nano_hajikyan@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՐԽԻՎԸ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, արխիվ, արխիվավար, ֆոնդ, հրաման, անձնական գործ, հաշվետվություն

Ներածություն

Թանգարանի արխիվում պահվում են թանգարանի գործունեությանը և անձնակազմին վերաբերող արխիվային նյութեր՝ թանգարանի, թանգարանի բաժինների հաշվետվություններ, տարեկան պլաններ, ցուցահանդեսային աշխատանքներին վերաբերող նյութեր և ներկայացված առարկաների ցանկեր՝ առարկաների լուսանկարներով, մամուլի արձագանքներ թանգարանի ներսում և արտերկրում կազմակերպված ցուցահանդեսների և առանձին առարկաների վերաբերյալ, գրություններ՝ ստացված տարբեր կազմակերպություններից, գերատեսչական մարմիններից, դուրս ուղարկված փաստաթղթերի պատճեններ, հրամանագրքեր, տպավորությունների գրքեր՝ նշանավոր մարդկանց գրառումներով, հրավիրատոմսեր, լուսանկարչական ալբոմներ և այլն:

Արխիվի ստեղծման պատմությունը

Հայաստանի պատմության թանգարանի արխիվը ստեղծվել է 1935 թ. (ՀՊԹ Արխիվ ֆ. 1, ց. 1, գ. 65, 1):

Թանգարանի արխիվի մասին տեղեկություններ կան 1941 թ. № 56 ակտում: Ըստ այդ ակտի՝ արխիվը ուներ երկու բաժին՝ հաշվապահական և գրասենյակային: 1940 թ. դրությամբ հաշվապահական բաժնում կար 80 գործ, գրասենյակայինում՝ 20 գործ: Այդ թվականների փաստաթղթերը արխիվային մշակման չեն ենթարկվել: Փաստաթղթերը, ըստ վերոհիշյալ ակտի, պահվում էին գրասենյակում, գրասենյակային պահարաններում: Ակտում կան ցուցումներ արխիվային գործը կազմակերպելու վերաբերյալ.

1. «Արխիվային նյութերը կարգավորել և դասավորել համաձայն ԽՍՀ միության ժողկոմատների, հիմնարկությունների արխիվների աշխատանքի վերաբերյալ եղած հրահանգով (հրաման ԽՍՀ միության ՆԳԺԿ Կոմիսարիատի 23 փետրվարի 1940 թ. № 114):
2. Արխիվային նյութերը բաժանել ըստ տարիների և տարեթվերի, գործում եղած փաստաթղթերը դասավորել ժամանակագրական կարգով, թերթի

* Ստացվել է 20.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

համարակալումը կատարել սև մատիտով, գործի վերնագիրը գրել պարզ և հասկանալի լեզվով:

3. Արխիվային նյութերի կարգավորման ընթացքում առանձնացնել այն նյութերը, որոնք կորցրել են իրենց պատմական նշանակությունը և ենթակա են ոչնչացման՝ համաձայն ցանկի, այդ տիպիների համար կազմել ցուցակ (ձև № 29) երեք օրինակից, որից երկուսը ուղարկել արխիվային բաժին ի հաստատության…
4. Ելնելով վերոհիշյալից՝ պարտավորեցնել դիրեկտոր ընկեր Ղևֆադարյանին սկսել արխիվի կարգավորումը անմիջապես այժմվանից և ավարտել ամենակարճ ժամանակամիջոցում» (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 1, գ. 65, 1–4):

Թանգարանի արխիվավարները

Առաջին տարիներին, ելնելով այն հանգամանքից, որ նյութերը քիչ էին, Պատմական թանգարանի հաստիքացուցակում արխիվավարի հաստիքը չկա: Թանգարանի հրամանագրքում հաստիքը առաջին անգամ հիշատակվում է 1959 թ.՝ «արխիվարիուս» անունով: Արխիվավար են եղել թանգարանի տարբեր աշխատակիցներ, որոնք այդ պաշտոնը համատեղել են իրենց հիմնական պաշտոնի հետ:

1959 թվականից արխիվավար են եղել հետևյալ աշխատակիցները՝

- Անիկ Կարապետյան 1959–1962 թթ.՝ արխիվարիուս (ՀՊԹ ֆ. 1, ց. 3, գ. 29, 26)
- Կլառա Քալաշյան 1963–1963 թթ.՝ հնագիտական պահեստի պատասխանատու՝ արխիվարիուս, (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 33, 12):
- Էմմա Մարտիրոսյան 1963–1964 թթ.՝ ըստ 1964 թվականի հաստիքացուցակի՝ Դիվանի վարիչ, ըստ հրամանների՝ Արխիվի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 34, 59):
- Ռայա Խուրշուդյան 1964–1970 թթ.՝ 1964 թ. սեպտեմբերից, ըստ հաստիքացուցակի՝ Դիվանի վարիչ, ըստ հրամանների՝ Արխիվի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 34, 33):
- Սուսաննա Ռոստոմյան 1970–1972 թթ.՝ 1970 թ. Արխիվի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 38, 6)
- Սյուզաննա Ասլանյան 1973–1975 թթ.՝ 1973 թ. Արխիվի պատասխանատու (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 43, 31):
- Լիլյա Մադոյան 1977–1991 թթ.՝ ազգագրության № 5 ֆոնդի պատասխանատու և արխիվի պատասխանատու (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 44, 46)
- Էլմիրա Աստվածատրյան՝ ըստ 1991 թ. մարտի 1-ի № 12 հրամանի՝ Հեղափոխության թանգարանը, միանալով Հայաստանի պատմության թանգարանին, ստեղծվեց նոր հաստիքացուցակ, 1991 թ. դեկտեմբերի 1-ից նշանակվեց Արխիվի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 3, գ. 38, 6):
- Նաիրա Հաջիկյան – 31.10.2020 թվականից առ այսօր արխիվավարն է (31.10.2020 թ. հրաման № 131-Ա., 6):

Արխիվում պահվող փաստաթղթերը

ՀՊԹ արխիվում պահվող փաստաթղթերի մեծ մասը մեքենագիր է, հայերեն լեզվով: Վաղ շրջանի հաշվետվությունները պլանները զեկուցագրերը ձեռագիր են, գրված են տարբեր չափերի թղթերի վրա, հաճախ նույնիսկ թղթի պատառիկների վրա: Սակավադեպ են ռուսերեն լեզվով փաստաթղթերը: Ռուսերեն լեզվով են ձևակերպված 1991 թ. ՀՊՊԹ-ին միացած Հեղափոխության թանգարանի բոլոր փաստաթղթերը:

Արխիվի ամենահին թվագրությամբ փաստաթուղթը (1919–1920 թթ.) Թիֆլիսի Կովկասյան թանգարանի վերահսկիչ Ս. Տեր-Ավետիսյանի նամակ-զեկուցագիրն է՝ Երևանում Հայաստանի պատմության թանգարան հիմնելու առաջարկով և ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության հաշվետվությունը թանգարանի առաջին տարվա գործունեության վերաբերյալ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 1, գ. 1, 1–10):

Արխիվի բոլոր գործերը մշակված են ըստ ընդունված կարգի. կարված են, էջակալված, ունեն ֆոնդային համարներ:

Արխիվում են պահվում անվանի գիտնականների, թանգարանի աշխատակիցների անձնական գործերը. փաստաթղթեր, հոդվածներ, գիտական ուսումնասիրություններ…

1. Ստեփան Լիսիցյան – Ազգագրության բաժնի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 583–584, 36)
   - Լիսիցյանի գրած զեկուցագրեր Կարապետյանին (1944 թ.), ԳԱ նախագահությանը՝ միացյալ պետության թանգարան ստեղծելու մասին 1941 թ. «Հավատալիքներ» (ձեռագիր) պատճեն:
2. Կարո Ղաֆադարյան – տնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 51–66, 3–4), Անձնական գործ 1941–1963 թթ.:
   - Ակնարկ՝ թանգարանի ստեղծման, ֆունկցիաների և գործունեության մասին,
   - Պատմական գիտությունների զարգացումը Սովետական Հայաստանում,
   - Զեկուցագիր ՍՍՌՄ ԳԱ ֆիլիալի նախագահ Հ. Ա. Օրբելյանին՝ Թ. Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» խմբագրման մասին, բացատագրեր՝ Դվին քաղաքի պեղումների մասին, հաշվետվություն գիտական, դաշտային և գիտամասսայական աշխատանքների մասին, թանգարանի աշխատանքների մասին, հոդված՝ «Հայաստանի պատմության պետական թանգարանը» վերնագրով:
3. Մորուս (Մարգար) Հասրաթյան – տնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 67–69, 4),
   - Անձնական գործ 1964–1975 թթ.,
   - «Մի քանի խոսք Ն. Յու. Մառի մասին՝ ծննդյան 100 ամյակին նվիրված,
   - Հաշվետվություն Բեյրութում կատարած աշխատանքների մասին:

4. Բորիս Ղարիբյան – տնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 70–72, 4),
   - Անձնական գործ 1975–1982 թթ.,
   - Բ. Ղարիբյանի մեծարման խոսքը՝ ազգագրության բաժնի վարիչ, Վալենտինա Աբրահամյանի և վերականգնման բաժնի վարիչ Վահրիճ Ղազազյանի ծննդյան 70-ամյակի և աշխատանքային գործունեության 50-ամյակի առթիվ:
5. Տելեմակ Խաչատրյան – տնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 73, 4),
   - Անձնական գործ 1983–1987 թթ.:
6. Ռաֆիկ Վարդանյան – տնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 74, 5),
   - Անձնական գործ 1988–1991 թթ.:
7. Ալֆրեդ Շահնազարյան – տնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 75–75ա, 5),
   - Անձնական գործ 1991–1997 թթ.,
   - Տարբեր ցուցահանդեսների բացման կապակցությամբ ելույթներ:
8. Շահեն Մկրտչյան – փոխտնօրեն (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 76–80, 5),
   - Անձնական գործ՝ տնօրենի տեղակալ 1972–1974 թթ.,
   - Շ. Մկրտչյան «Լեռնային Ղարաբաղի պատմական հուշարձաններ»,
   - Մարտակերտի, Հադրութի, Մարտունու, Թարթառի, Ստեփանակերտի, Շուշվա պատմական հուշարձաններ:
9. Եվգենի Բայբուրդյան – Հնագիտության բաժնի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 45–48ա, 3),
   - Անձնական գործ՝ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող՝ բաժնի վարիչ 1926–1939 թթ.,
   - «Հայկական ԽՍՀ հնագույն մշակույթների հաջորդականությունը հնագիտական նյութերով» աշխատության կարծիք (անտիպ, ռուսերեն):
10. Ասլան Շահնազարյան – Հնագիտության և դրամագիտության բաժնի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 49–50, 3),
    - Անձնական գործ 1933–1937 թթ., 1944–1945 թթ.,
    - «Ակնարկներ՝ պատմական թանգարանի հնագիտական բաժինը, ՀՊ կուլտուր-պատմական թանգարանը» մասնագիտական կարծիք:
11. Վալենտինա Աբրահամյան – Ազգագրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 81–86, 5)
    - «Ձուլիակությունը միջնադարյան Հայաստանում» աշխատության մասին Վ. Բդոյանի մասնագիտական կարծիք,
    - Հայ համաքարությունները Անդրկովկասի քաղաքներում 17–19-րդ դարերում աշխատության անոտացիան,
    - Արծաթյա զարդերի և իրերի կատալոգներ,
    - «Հայ ոսկերիչների թեմատիկան սովետական շրջանում», «Արհեստները և նրանց զարգացման ուղիները»:

12. Նազիկ Ավագյան – Ազգագրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 87–95, 6)
    - Ն. Ավագյանի մասնակցությամբ կազմակերպված ցուցահանդեսներ և էքսպեդիցիաներ,
    - Գիտական հոդվածներ, «Հայկական գուլպաներ և սոնապաններ» կատալոգ-ալբոմ,
    - «Նոր ցուցահանդես» հոդված՝ նվիրված ազգագրագետ Վարդ Բդոյանի ծննդյան 85-ամյակին:
13. Արմենուհի Սամվելյան – Ազգագրության բաժնի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 96–119, 6–7),
    - Անձնական գործ 1985–1988 թթ.,
    - Ազգագրագետ Երվանդ Լալայանի կենսագրական /ծննդյան 100-ամյակ/,
    - Դիրեկտոր Մ. Հարությունյանին ուղղված զեկուցագրեր՝ թանգարանի գործունեության վերաբերյալ,
    - Ցուցակներ 1934 թ. թանգարանի անջատման ժամանակ պետական պատկերասրահին հանձնված նյութեր,
    - «Էջմիածնի Մայր Աթոռի մետաղյա գեղարվեստական իրերի մասին»,
    - Կոստանդնուպոլիսը որպես հայ գեղարվեստական մետաղամշակութային կենտրոն,
    - Թանգարանի ֆոնդում պահվող քշոցներ,
    - Պղնձե առարկաների հատկանշական ցուցակներ:
14. Խաչիկ Արտաշեսի Մուշեղյան – Դրամագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 120–122, 7),
    - Անձնական գործ 1963–1982 թթ.,
    - Լենինգրադի Էրմիտաժի դրամագիտության բաժնի նիստի արձանագրություն,
    - «Դրամական շրջանառությունը Հայաստանում» աշխատությունը:
15. Էմմա Գևորգյան – Ցուցադրության բաժնի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 366–384, 20–21)
    - Անձնական գործ 1957–2005 թթ.,
    - Ցուցադրությունում նկարահանումներ կատարելու, նյութերից օգտվելու թույլտվություններ,
    - Ժամանակավոր ցուցահանդեսների վերաբերյալ տեղեկություններ,
    - Մշտական ցուցադրությունում ցուցադրված առարկաների մատիտանկարների տեղադրման վայրը և նմուշների տարբեր տարիների կատարված փոփոխությունների մասին:
16. Հենրիկ Սարգսյան – Դրամագիտության բաժնի վարիչ, գիտքարտուղար (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 123–141, 8),
    - Անձնական գործ 1989–2000 թթ.,
    - Կատալոգ՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի,
    - 17-րդ դարի հայկական մեդալներ,

- Հայաստանի Հանրապետության նոր փառանշանների, շքանշանների, նշանների պատրաստման նախագիծ,
- Հայկական դրամներ (1995 թ. Նանթում ցուցադրվող դրամների) կատալոգ,
- Մետաղադրամների և հնագույն կնիքների բացառիկ ժողովածու:

17. Հարություն Մնացականյան – Հնագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 297–336, 16–18),
    - Անձնական գործ 1940–1975 թթ.,
    - Լճաշենի և Կիրովականի դամբարանների պեղումներից հայտնաբերված բրոնզեդարյան ոսկյա առարկաների նկարագիրը,
    - Նախաուրարտական ամրոցներ,
    - Բրոնզեդարյան քառանիվ սայլերի վերականգնման մասին,
    - Սևանի ավազանի կուրգաններից հայտնաբերված բրոնզեդարյան սայլերի, լճի տատանումների մասին,
    - Դիլիջանի և Կամոյի գավառագիտական թանգարաններ:
18. Եվգենիա Մուշեղյան – Հնագիտության բաժնի վարիչ պատմական գիտություններ թեկնածու (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 190–292, 11–16)
    - Անձնական գործ 1945–1953 թթ.,
    - Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաների ցանկը, Գեղարդի վիմագիր արձանագրությունները և տեքստերի վերծանությունը,
    - Գառնի հուշարձանի արձանագրությունների գծագրերը,
    - Կեչառույքի վիմագիր արձանագրությունները,
    - Բջնիի վիմագիր արձանագրությունները,
    - Պատմական հուշարձանների հիշատակությունը հայկական սկզբնաղբյուրներում:
19. Տելեմակ Խաչատրյան – Պատմական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 426–505, 23–28),
    - Նյութեր ծիսակատարության մասին,
    - ՀՊՊ թանգարանի հնագիտության բաժնի կողմից ցուցադրությունում կատարվող փոփոխությունների մասին, Ալաջա Հույուկի պեղումների մասին,
    - Թանգարանի հնագիտության բաժնի նիստի արձանագրությունից քաղվածք Տ. Խաչատրյանի «Հին Արթիկի նյութական մշակույթը», «Շիրակի հնագույն մշակույթը» գիրք,
    - Հառիճի արշավախմբի պեղումներից, Արթիկի հնագիտական արշավախմբի պեղումները:
20. Ռուբեն Վարդանյան – Դրամագիտության բաժնի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 417–425, 23)
    - Սիլոգեն Հռոմեական դրամների հատոր, հոդվածներ՝ «Հայ դրամագիտության հանդես», «Պատմա-բանասիրական հանդես», «Պատմութ-

յան մետաղյա ցոլքեր» 172 դրամ թանգարանի դրամագիտական ժողովածու,

Դվինը պեղող աշխատակիցների կազմերը:

21. Եվգենյա Գյուզալյան – Ազգագրության բաժնի գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 576–858, 16–36),
   - Ագուլեցոց, Զանգեզուրի, Ախալցխայի, Մեղրեցոց, Շատախի Տրապիզոնի, Ուտիացիների տարազների նկարագրությունները, Սյունիքի ժողովրդական հավատալիքները,
   - Արշավախմբի քարտեզներ /Զանգեզուր և Մեղրի, Զանգեզուրի գավառ,
   - Գյուզալյանի փաստաթղթերը, տարբեր տարիների լուսանկարներ՝ նկարագրություններով:
22. Վարդան Պետոյան – Ազգագրության բաժնի գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 585–587, 36),
   - Անձնական գործ 1947–1951 թթ.,
   - Գրքեր, պատվոգրեր, տիտղոսաթերթեր, 80-ամյակին նվիրված հոդվածներ,
   - Սասուն-Տարոնի քարտեզ (1949 թ.), Մուշում գտնվող վանքերի ֆոտոնկարներ Գևորգ Չաուշին, Հրայրին, Վ. Պետոյանին նվիրված հոդվածներ:
23. Նիկոլայ Կարապետյան – Պատմական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 506–575, 28–36),
   - Անձնական գործ 1939–1978 թթ.,
   - Արևմտյան Հայաստանը, 1900–1914 թթ. /մեքենագրական աշխատանքներ/,
   - Դաշնակցություն և հնչակյան կուսակցություններ,
   - «Համերաշխություն թուրքերի հետ» աշխատությունը՝ 20-րդ դարասկզբին հայ հեղափոխական դաշնակցության գործունեության վերաբերյալ,
   - Հայ ազգային – ազատագրական շարժման նոր վերելք,
   - Հենրիի Գաբրիելյան «Հայ ազգային-ազատագրական շարժումների գնահատման շուրջ,
   - 1870–1880 թթ. հայ բուրժուադեմոկրատական-ազատագրական պատերազմներն ու Ռաֆֆին,
   - Գերմանական միսիոներական գործունեությունը Արևմտյան Հայաստանում:
24. Սոնա Մախաթչյան – Հնագիտության սեկտորի վարիչ (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 181–189, 11),
   - Անձնական գործ 1962–1987 թթ.,
   - Կատալոգ՝ «Միջնադարյան խփեր»,

- Հոդվածներ՝ «Միջնադարյան Հայաստանի կավանոթների խփերը և նրանց զարդանախշերը»,
- «Դվինից և Անիից հայտնաբերված ոսկե իրեր»:

25. Իոնա Ավագյան – Ազգագրության բաժնի ավագ գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 385–416, 21–22),
    - Անձնական գործ ավագ գիտաշխատող 1940–2011 թթ.,
    - Կովկասյան գորգեր,
    - Վ. Աբրահամյան ՀՊՊ թանգարանի «Արծաթյա իրերի և զարդերի հատկանշական ցուցակներ,
    - Անկողնապարկերի կատալոգներ,
    - Հայերեն արձանագրությամբ գորգեր:
26. Աստղիկ Իսրայելյան – Ազգագրության բաժնի ավագ գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 293–296, 16)
    - «Հմայական պահպանակներ» կատալոգ՝ լուսանկարների ցուցակներ:
27. Ջեփյուռ Թառայան – Հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող (ՀՊԹ արխիվ ֆ. 1, ց. 6, գ. 588, 37),
    - Աստվածամոր հնագույն նախատիպերը կերպարվեստում, Դիսերտացիա՝ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար:

Ըստ 1976 թ. հրամանագրքի՝ 1976 թ. ապրիլի 21-ին հրաման № 82, էջ 25, թանգարանի գրադարանի արխիվը հանձնվեց թանգարանի արխիվին:

Եզրակացություն

Թանգարանի արխիվը այսօր համալրվում է թանգարանի, թանգարանի բաժինների հաշվետվություններով, պլաններով, ցուցահանդեսային նյութերով, հրամաններով, տպավորությունների գրքերով, անձնական գործերով:

2024 թվականի դեկտեմբերի դրությամբ Արխիվի հիմնական ֆոնդում պահվում է 3370 արխիվային միավոր, 138.370 թերթով, 795 անձնական գործ: Արխիվից կատարվում են սպասարկումներ և՛ թանգարանի աշխատակիցներին, և՛ թանգարան դիմած քաղաքացիներին և կազմակերպություններին՝ ըստ գործող կարգի: Փաստաթղթերը թվայնացվում են, որը հեշտացնում է սպասարկումը:

Արխիվում պահվող փաստաթղթերը սկզբնաղբյուր են հանդիսանում ուսումնասիրողների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 65:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 12:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 29:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 34:

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 38:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 43:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 44:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 45–48ա:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 49–50:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 56–66:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 67–69:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 70–72:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 74:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 75–75ա:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 76–80:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 81–86:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 87–95:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 96–119:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 120–122:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 123–141:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 181–189:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 190–292:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 296:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 297–336:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 366–384:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 385–416:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 417–425:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 426–505:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 506–575:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 576–858:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 583–584:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 585–587:
ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 588:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան

Наира Аджикян

Музей истории Армении
nano_hajikyan@mail.ru

АРХИВ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

Ключевые слова: Музей истории Армении, архив, архивариус, фонд, приказ, личное дело, отчет

Архив МИА был создан в 1935 году. В архиве хранятся архивные материалы, касающиеся деятельности музея и его персонала, отчеты, годовые планы, материалы о выставочной работе и списки экспонатов с фотографиями, пресс-релизы о выс-

тавках, организованных внутри музея и за рубежом, а также о отдельных предметах, корреспонденция с различными организациями, государственными учреждениями, копии отправленных документов, приказные книги, книги отзывов, приглашения, фотоальбомы.

Архив регулярно пополняется. На декабрь 2024 года в основном фонде архива хранится 3370 архивных единиц – 138370 листов и 795 личных дел. Из архива предоставляются услуги, как сотрудникам музея, так и гражданам и организациям, обратившимся в музей, в соответствии с действующими правилами. Документы оцифровываются, что облегчает обслуживание.

Документы, хранящиеся в архиве, являются первоисточниками для исследователей.

Naira Hajikyan

History Museum of Armenia

nano_hajikyan@mail.ru

THE ARCHIVE OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

Keywords: History Museum of Armenia, archive, archivist, fund, order, personal file, report

The archive of the HMA was established in 1935. The archive holds archival materials related to the activities of the museum and its staff, reports, annual plans, materials on exhibition work, lists of exhibits with photographs, press releases about exhibitions organized both within the museum and abroad, as well as information about individual items, correspondence with various organizations and government institutions, copies of sent documents, order books, guestbooks, invitations, and photo albums.

The archive is regularly updated. As of December 2024, the main archive fund contains 3,370 archival units – 138,370 sheets and 795 personal files. The archive provides services to museum staff, as well as to citizens and organizations that contact the museum, in accordance with current regulations.

Documents are digitized, making services more efficient. The documents stored in the archive are primary sources for researchers.